«ՀՀ ոստիկանության կողմից մասնավոր պահնորդական կազմակերպությունների ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունն ու ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« »_____2021թ. N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ Մասնավոր պահնորդական կազմակերպությունների ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունն ՈՒ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹԸ ԵՎ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 2.1. հոդվածի 2-րդ մասին և 3-րդ հոդվածի 1.1. մասին և «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից մասնավոր պահնորդական կազմակերպությունների ռիսկի վրա հիմնված ստուգումների մ

եթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից մասնավոր պահնորդական կազմակերպությունների գործունեության ստուգումների ստուգաթերթը և հարցաշարը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույնորոշումնուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

« »----------2021թ.

ք.Երևան

Հավելված 1

ՀՀ կառավարության

« »_____2021թ. N -Ն

որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ընդհանուր նկարագիրը

1. **Սույնկարգովկարգավորվում է մասնավոր պահնորդական և թիկնապահական ծառայությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:**
2. **Սույնմեթոդաբանությանիմաստով ռիսկը՝ տնտեսվարող սուբյեկտի գործունեության արդյունքում մարդու կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև պետության և հասարակության շահերին վնաս հասցնելու հավանականությունն է՝ հաշվի առնելով դրա բացասական հետևանքները:**
3. Ռիսկայնությանգնահատմանմեթոդաբանությունը և ռիսկայնության չա փանիշները ոստիկանությանը հնարավորություն կտան՝

1) վերլուծելու և դասակարգելու վերահսկվող կազմակերպություններն՝ ըստ դր անց ռիսկայնության գործոնների.

2) ձևավորելու վերահսկվող կազմակերպությունների տվյալների բազա.

3) որոշելու ստուգումների առավել օպտիմալ պարբերականությունը:

4. Մասնավորպահնորդականկազմակերպությունների գործունեության ըն թացքում մատուցվող ծառայությունների «Մասնավոր պահնորդական գ ործունեության մասին» օրենքով, «Զենքի մասին» օրենքով, այլ օրենքնե րով և իրավական ակտերով սահմանված պահանջներին անհամապատ ասխան կազմակերպելու ռիսկայնությունը որոշող առավելագույն չափա նիշը 5 միավորն է: Ռիսկային են հետևյալ ոլորտները՝

1) առանց պատվիրատուի հետ կնքված գրավոր պայմանագրի, թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելը - 3 միավոր.

2) թիկնապահական և պահնորդական ծառայությունների մատուցման մասին կնքված պայմանագիրը, դրա կատարման հետ կապված տեղեկություններ պա րունակող փաստաթղթերը և նյութերը հինգ տարի ժամկետով չպահպանելը - 4 միավոր.

3) կազմակերպության կողմից միասնական համազգեստի և տարբերանշանի ն կարագիրը չհաստատելը - 1 միավոր.

4) թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմա կերպության ղեկավարները, թիկնապահները և պահնորդները պաշտոններ են զբաղեցնում կամ աշխատում են այն պաշտպանվող անձանց մոտ կամ պահպ անվող օբյեկտներում, որոնց հետ թիկնապահական կամ պահնորդական գործո ւնեություն իրականացնող կազմակերպությունը կնքել է ծառայություններ մատ ուցելու պայմանագիր – 5 միավոր.

5) միասնական համազգեստի և տարբերանշանների անհամապատասխանությունն օրենքի պահանջներին և կազմակերպության աշխատողների կողմից այն կրելու կարգը խախտելը - 2 միավոր.

6) կազմակերպության տրանսպորտային միջոցներն օրենքով սահմանված պահանջներին անհամապատասխան շահագործելը - 3 միավոր.

7) արձանագրված իրավախախտումների և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ փաստաթղթերը հինգ տարի ժամկետով չպահելը - 3 միավոր.

8) առանց ոստիկանության կողմից տրված որակավորման ստուգման վկայականի կազմակերպությունունում պահնորդներ (թիկնապահներ) պահելը - 5 միավոր.

9) կազմակերպությունում աշխատող պահնորդներն ու թիկնապահներն երեք տարին մեկ անգամ պարտադիր վերապատրաստում չեն անցել - 2 միավոր.

10) կազմակերպությունում աշխատող պահնորդներն ու թիկնապահները ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու պիտանելիությունը որոշող ստուգումներ չանցնելը - 3 միավոր.

11) առանց աշխատանքային պայմանագրի կազմակերպությունում պահնորդներ (թիկնապահներ) պահելը - 5 միավոր.

12) կազմակերպությունում աշխատող պահնորդներին (թիկնապահներին) չապահովագրելը - 5 միավոր.

13) որակավորում ունեցող մասնագետների (թիկնապահ, պահնորդ) փոփոխության դեպքերում ոստիկանությանը սահմանված ժամկետում չտեղեկացնելը - 2 միավոր.

14) կազմակերպության կողմից օրենքով սահմանված կարգի խախտումներով զենքի ձեռքբերումը - 5 միավոր.

15) օրենքով սահմանված զենքի պահման պայմանների խախտում - 5 միավոր.

16) կազմակերպության կողմից տրված զենքը պահնորդներին (թիկնապահներին) ամրակցելու մասին և նրանց կողմից սահմանված կարգով զենք կրելու մասին հրամանի բացակայության դեպքում – 5 միավոր.

17) արձանագրված իրավախախտման կամ իրավախախտումը կանխելու կամ իրավախախտին վնասազերծելու ընթացքում ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ զենք գործադրելիս քաղաքացու կյանքին, առողջության կամ գույքին վնաս հասցնելու դեպքում թիկնապահի կամ պահնորդի կողմից իրավապահ մարմիններին անհապաղ չտեղեկացնելը - 5:

5. Մասնավորպահնորդականկազմակերպության գործունեության ռիսկն ո

ւնի առավելագույնը 60 միավոր ընդհանուր կշիռ:

6. Ըստռիսկայնությանաստիճանը որոշող չափանիշների գնահատման՝ վերահսկվող կազմակերպությունները դասակարգվում են հետևյալ երեք խմբերի՝

1) բարձր ռիսկային.

2) միջին ռիսկային.

3) ցածր ռիսկային:

7. Ռիսկայինխմբերն ըստ միավորների (կշռի) հանրագումարի դասակարգվում են՝

h/h	***Ռիսկայնության խումբը***	***Միավորը (կշիռը)***
1	Ցածր	1 - 20 միավորներ հավաքած կազմակերպություններ
2	Միջին	21 - 40 միավորներ հավաքած կազմակերպություններ
3	Բարձր	41 - 60 միավորներ հավաքած կազմակերպություններ

8. Ստուգումների հաճախականությունը որոշվում է ըստ ռիսկայնության խմբերի՝

1) ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված կազմակերպությունների մոտ՝ յուրաքանչյուր 5 տարին 1 անգամ.

2) միջին ռիսկայնության խմբում ընդգրկված կազմակերպությունների մոտ՝ յուրաքանչյուր 3 տարին 1 անգամ.

3) բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված կազմակերպությունների մոտ՝ տարեկան 1 անգամ:

Հավելված 2

կառավարության

«

»_____2021թ. N -Ն

որոշմ
ան

Ս Տ ՈՒ Գ Ա Թ Ե Ր Թ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ Մասնավոր պահնորդական կազմակերպությունների

գործունեության ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

Ստուգման սկիզբը **Ստուգման ավարտը**

20 թ. _____ _____ 20 թ. _____ _____

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) *(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)*

Ստուգման հիմքը_____

Ստուգման ենթակա հարցերի շրջանակը՝ համաձայն ձևի (կցվում է)

Տնտեսական գործունեության տեսակի դասակարգչի ծածկագիրը _____

Տնտեսվարող սուբյեկտի՝

անվանումը _____

գտնվելու վայրը_____

լիցենզիան տալու ամսաթիվը « » _____ 20 թ.

լիցենզիայի համարը № _____

այլ կոնտակտային տվյալներ _____

ՀՎՀՀ-ի ծածկագիրը՝ _____

Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք՝

1._____

(պաշտոնը) *(ծառայողական վկ*

_____ _____

(ազգանունը, անունը, հայրանունը) *(ստորագրությ*

2._____

(պաշտոնը) *(ծառայողական վկ*

_____ _____

(ազգանունը, անունը, հայրանունը) *(ստորագրությ*

3._____

(պաշտոնը) *(ծառայողական համարը)*

_____ _____

(ազգանունը, անունը, հայրանունը) *(ստորագրությ*

Տնտեսվարող սուբյեկտի ղեկավար՝

_____

_____ *(ստորագրությունը)*

(ազգանունը, անունը, հայրանունը)

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

Մասնավոր պահնորդական կազմակերպությունների գործունեության ստուգման

h/h	Հարցը	Այո	Ոչ	Կշիռը	Մեկնաբանություններ
1	2	3	4	5	6
1.	Արդյո՞ք ծառայությունները մատուցվում են կազմակերպության և պատվիրատուի միջև սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրի համաձայն:			3	
2.	Արդյո՞ք կազմակերպությունը հինգ տարի ժամկետով պահպանում է թիկնապահական և պահնորդական ծառայությունների մատուցման մասին կնքված պայմանագրերը, դրանց կատարման հետ կապված տեղեկություններ պարունակող փաստաթղթերը և նյութերը:			4	
3.	Կազմակերպության կողմից հաստատվել է արդյո՞ք միասնական համազգեստի և տարբերանշանի նկարագիրը:			1	
4.	Արդյո՞ք, թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ղեկավարները, թիկնապահները և պահնորդները պաշտոնների չեն զբաղեցնում կամ աշխատում այն պաշտպանվող անձանց մոտ կամ պահպանվող օբյեկտներում, որոնց հետ թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը կնքել է ծառայություններ մատուցելու պայմանագիր			5	
5.	Արդյո՞ք, միասնական համազգեստը և տարբերանշանները համապատասխանում են օրենքի պահանջներին և կազմակերպության աշխատողներն այն կրում են սահմանված կարգով:			2	
6.	Արդյո՞ք, կազմակերպությունը տրանսպորտային միջոցները շահագործում է օրենքով սահմանված պահանջներին			3	

	համապատասխան:	
7.	Արձանագրված իրավախախտման և ձեռնարկված մ իջոցառումների վերաբերյալ կազմակերպությունում փաստաթղթեր կազմվում են, թ՞ե ոչ և արդյո՞ք դրանք պահվում են հինգ տարի ժամկետով	3
8.	Արդյո՞ք, կազմակերպությունունում աշխատող բոլոր պահնորդներն ու թիկնապահներն ունեն ոստիկանության կողմից տրված որակավորման ստուգման վկայականներ:	5
9.	Արդյո՞ք, կազմակերպությունում աշխատող բոլոր պահնորդներն ու թիկնապահներն երեք տարին մեկ անգամ անցել են պարտադիր վերապատրաստում	2
10.	Արդյո՞ք, կազմակերպությունում աշխատող բոլոր պահնորդներն ու թիկնապահներն պարբերաբար անցել են ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու պիտանելիությունը որոշող ստուգումներ	3
11.	Կազմակերպությունում աշխատող բոլոր պահնորդների ու թիկնապահների հետ կնքած են աշխատանքային պայմանագրեր, թ՞ե ոչ:	5
12.	Կազմակերպությունում աշխատող պահնորդները (թիկնապահները) ապահովագրված են, թե ոչ:	5
13.	Որակավորում ունեցող մասնագետների փոփոխությ ան դեպքերում ոստիկանությանը սահմանված ժամկետում տեղեկացվել է, թե ոչ:	2
14.	Կազմակերպության կողմից օգտագործվող զենքը օրենքով սահմանված կարգով է ձեռք բերվել, թե ոչ:	5
15.	Կազմակերպության զենքը արդյոք պահվում է օրենքո վ սահմանված պահանջներին համա-պատասխան, թե ոչ:	5
16.	Առկա է արդյոք կազմակերպության հրամանը՝ զենքը պահնորդներին (թիկնապահներին) ամրակցելու մաս ին և նրանց կողմից զենք կրվում է սահմանված կարգ ով, թե ոչ:	5
17.	Թիկնապահի կամ պահնորդի կողմից իրավապահ մարմիններին անհապաղ տեղյակ պահվել է արձանագրված իրավախախտման կամ իրավախախտումը կանխելու կամ իրավախախտին վնասազերծելու ընթացքում ֆիզիկական ուժ,	5

հատուկ միջոցներ կամ զենք գործադրելիս
քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին
վնաս հասցնելու դեպքում:

Ընդհանուր կշիռը՝ 60 միավոր

1 **«Այո»** - այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է, կատարվել է, նշվ
ներառված պահանջների՝ կեսից ավելիի դրական պատասխանի դեպքում (չի կշռ
2 **«Ոչ»** - ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում, չի կատարվել, նշվ
ներառված պահանջների՝ կեսի և կեսից ավելիի բացասական պատասխանի դեպ
(կշռավորվում է)
3 **«Կշիռ»** - ռիսկի միավոր